

## ՄԱՍ 5. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱՑՈՒԹՅՈՒՆ

Վիճակագրության բնագավառում համագործակցությունը ներառել է տեղեկատվության և փորձի փոխանակումը, ինչպես նաև ներուժ ստեղծելու նպատակով՝ դրանց տարածումը վիճակագրական տվյալների հետագա օգտագործման համար: Միջազգային վիճակագրական համագործակցությունը ներառել է ինչպես միջազգային փորձագետների և աշխատանքային խմբերի այցելությունները, այնպես և համագործակցության կատարելագործմանն ուղղված համապարփակ ծրագրերը:

Ծառայությունը շարունակել է ակտիվ մասնակցությունը միջազգային համագործակցության շրջանակում համաշխարհային մասշտաբով վիճակագրական մեթոդաբանության և գործիքակազմի կատարելագործման, ներդաշնակեցման ու միասնականացման, տարբեր երկրների վիճակագրական ծառայությունների կողմից պաշտոնապես հրապարակվող տնտեսական, սոցիալական, ժողովրդագրական, շրջակա միջավայրի վիճակի և բնակչության կենսամակարդակի վերաբերյալ ցուցանիշների համադրելիության ու փոխանակման ապահովման ուղղությամբ, որոնց շրջանակում Ծառայությանն է տրամադրվել նաև տեխնիկական, ֆինանսական, խորհրդատվական և աշխատանքային օգնություն: Ըստ այդմ, հաշվետու ժամանակահատվածում Ծառայության կողմից իրականացվել են հետևյալ նախագծերը.

1. «Աջակցություն Հայաստանի ազգային վիճակագրական ծառայությանը ԹՎԻՆԻՆԳ ծրագրի միջոցով» ԵՄ ԹՎԻՆԻՆԳ ծրագրի ներքո.

- որակի կառավարում,
- բիզնես-վիճակագրության կատարելագործում,
- հարմոնիզացված սպառողական գների ինդեքսներ,
- ազգային հաշիվների համակարգ,
- գյուղատնտեսական համատարած հաշվառում,
- տեղեկատվական և հեռահաղորդակցման հանրության վիճակագրություն:

2. «Հայաստանի ազգային վիճակագրական համակարգի ամրապնդում - II փուլ» ԵՄ ԹՎԻՆԻՆԳ ծրագրի ներքո.

- վիճակագրական տեղեկատվության տարածման համակարգ
- ժողովրդագրական վիճակագրություն
- աշխատանքի շուկայի վիճակագրություն
- աղքատության վիճակագրություն
- ինովացիոն վիճակագրություն
- ջրի հաշիվներ,

3. ԵՄ Թայեքս գործիքի ներքո.

- Հարմոնիզացված սպառողական գների ինդեքսներ,

4. Եվրոպական բնապահպանական գործակալության օժանդակությամբ.

- ԵՀԲ-ԲՏՄՀ (Բնապահպանական Տեղեկատվական Միասնական Համակարգ) նախագիծ,

5. ԵՄ օժանդակությամբ.

- ԻՆՈԳԵՅԹ (INOGATE) միջազգային համագործակցության նախագիծ էներգետիկայի ոլորտում,

6. ԵՄ օժանդակությամբ.

- Աջակցություն գյուղատնտեսության և գյուղական զարգացմանը ԻՆՊԱՐԴ (ENPARD) Հայաստան (բյուջետային աջակցություն),

7. Նորվեգիայի վիճակագրության օժանդակությամբ և Եվրոպական ազատ առևտրի ստոցիացիայի ֆինանսավորմամբ.

- Որակի կառավարում,

8. Համաշխարհային բանկի խորհրդատվական օժանդակությամբ.

- Տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտություն,

9. Համաշխարհային բանկի օժանդակությամբ.

- «Վիճակագրական հզորությունների կառուցման TF 013918 դրամաշնորհ»,

-«Վիճակագրական հզորությունների կառուցում և աջակցություն Հայաստանի փորձնական Գյուղատնտեսական համատարած հաշվառման իրականացմանը»,

10. Համաշխարհային բանկի օժանդակությամբ.

- 2011 թվականի ցուցանիշներով միջազգային գլոբալ համադրումների ծրագիր ԱՊՀ տարածաշրջանում (համակարգող՝ ԱՊՀ միջպետական վիճակագրական կոմիտե),

11. Համաշխարհային բանկի օժանդակությամբ.

- Երկկողմանի համագործակցության նախագիծ Հայաստանի և Վրաստանի միջև 2011 թվականի ցուցանիշներով միջազգային գլոբալ համադրումների ծրագրի շրջանակում,

12. Համաշխարհային բանկի օժանդակությամբ.

-Գյուղատնտեսական և գյուղական վիճակագրության կատարելագործման գլոբալ ռազմավարություն ԱՊՀ տարածաշրջանում (համակարգող՝ ԱՊՀ միջպետական վիճակագրական կոմիտե),

13. Համաշխարհային բանկի օժանդակությամբ.

- Աշխատանքի վիճակագրության զարգացում ԱՊՀ տարածաշրջանում (համակարգող՝ ԱՊՀ միջպետական վիճակագրական կոմիտե),

14. ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի օժանդակությամբ.

- Բարձրացնել գործընկեր պետական մարմինների կարողություններն ազգային և մարզային մակարդակով «ԱրմենիաԻնֆո»-ի մեկնարկային գործարկման հարցում՝ Հազարամյակի զարգացման նպատակների (ՀՁՆ) և Կայուն զարգացման ծրագրի (ԿՁԾ) գծով արձանագրած առաջընթացը մշտադիտարկելու և լուսաբանելու նպատակով,

15. ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի օժանդակությամբ.

- Մանկական աղքատություն,

- 2013 թվականի, 2014 թվականի, 2015 թվականի «ՏՐԱՆՍՄՈՆԵԵ» ծրագիր,

16. ՄԱԿ-ի զարգացման ծրագրի, ՄԱԿ-ի Պարենի և Գյուղատնտեսության կազմակերպության օժանդակությամբ և Ավստրիական Զարգացման Գործակալության ֆինանսավորմամբ.

- Աջակցություն գյուղատնտեսական համատարած հաշվառմանը,

17. ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի (UNECE) օժանդակությամբ.

- ՄԱԿ-ի զարգացման հաշվի (UNDA) 9-րդ տրանշի նախագիծ «Ազգային կարողությունների հզորացում UNECE-ի առավել խոցելի երկրներում վիճակագրության կայուն զարգացման համար»,

18. ԱՄՆ միջազգային զարգացման գործակալության/ԱՄՆ Հաշվառումների Բյուրոյի օժանդակությամբ.

- ՀՀ 2011 թվականի մարդահամար,

19. Նորվեգիայի կառավարության օժանդակությամբ.

- ՀՀ 2011 թվականի մարդահամար,

20. ԱՄՆ միջազգային զարգացման գործակալության/ՄԱԿԸՈՒՆԻՆԻ հինթերնեյշնլ ինկ. կազմակերպության, ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի, ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամի, ՄԱԿ-ի ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի ծրագրի օժանդակությամբ.

- 2010 թվականի Հայաստանի ժողովրդագրական և առողջության հետազոտություն,

21. ԱՄՆ միջազգային զարգացման գործակալության/ICF հինթերնեյշնլ կազմակերպության, ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամի օժանդակությամբ.

- 2015 թվականի Հայաստանի ժողովրդագրական և առողջության հետազոտություն,

22. ԱՄՆ միջազգային զարգացման գործակալության Ձեռնարկությունների զարգացման և շուկայի մրցունակության ծրագրի, Հայաստանի ազգային մրցունակության հիմնադրամի, Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության (GIZ) Հարավային Կովկասում տնտեսության խթանման ծրագրի և Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության օժանդակությամբ.

- 2013 թվականի ժամանողների և մեկնողների ընտրանքային հետազոտություն,

23. ԱՄՆ-ի Գյուղատնտեսության դեպարտամենտի օժանդակությամբ և ԱՄՆ միջազգային զարգացման գործակալության ֆինանսավորմամբ.

- Աջակցություն Հայաստանի Կառավարությանն անցկացնելու Հայաստանի Գյուղատնտեսական Համատարած Հաշվառումը,

24. ԱՄՆ միջազգային զարգացման գործակալության/Տետրա Տեք ինկ. կազմակերպության օժանդակությամբ.

- Հայաստանի ազգային էներգետիկ հաշվեկշռի և ջերմոցային գազերի գույքագրման համակարգերի ստեղծում,

25. ԵՀ/Պարենի և գյուղատնտեսության կազմակերպության օժանդակությամբ.

- ԵՀԲ-ի արևելյան տարածաշրջանում պարենի ապահովման որոշումների կայացման բարելավմանն ուղղված տեղեկատվական համակարգերի ծրագիր,

26. Աշխատանքի միջազգային կազմակերպության օժանդակությամբ.

- Դպրոցից դեպի աշխատանք անցումային հետազոտություն երիտասարդ մարդկանց համար Հայաստանում 2014 թվական,

27. Գլոբալ հետազոտություն Երեխաների աշխատանքի չափման և քաղաքականության մշակման/ Երեխաների աշխատանքի վերացման միջազգային ծրագրի շրջանակում Աշխատանքի միջազգային կազմակերպության օժանդակությամբ և ԱՄՆ աշխատանքի դեպարտամենտի ֆինանսավորմամբ.

- Հայաստանում 2015 թվականին երեխայի աշխատանքի ազգային հետազոտություն:

Վիճակագրության զարգացման միջազգային միտումներին իրազեկ լինելու նպատակով, հաշվետու ժամանակահատվածում շարունակվել է նաև Ծառայության անձնակազմի մասնագիտական ներուժի զարգացմանը նպատակաուղղված համագործակցությունը: Ծառայության աշխատակիցները մասնակցել են արտասահմանյան երկրներում կազմակերպված և վիճակագրության բոլոր բնագավառներին առնչվող վերապատրաստման դասընթացների, աշխատանքային հանդիպումների, միջազգային համաժողովների, նստաշրջանների, սեմինարների, առանձին թեմատիկ քննարկումների և այլ միջոցառումների (այցեմասնակցությունների թիվը՝ 271, այդ թվում՝ 2013 թվականին՝ 89 (29 արտասահմանյան երկրում), 2014 թվականին՝ 88 (21 արտասահմանյան երկրում), 2015 թվականին՝ 94 (25 արտասահմանյան երկրում):

Նշված միջոցառումների համար նախապատրաստվել և հրապարակվել է 63 զեկույց 823 էջ ընդհանուր ծավալով, (այդ թվում, 2013 թվականին՝ 19 (290 էջ), 2014 թվականին՝ 18 (240 էջ), 2015 թվականին՝ 26 (293 էջ)):

Նշվածից զատ, Ծառայության աշխատակիցները մասնակցել են նաև տարբեր կազմակերպությունների (նախարարություններ, միջազգային կազմակերպություններ և այլն) կողմից կազմակերպված 231 տեղային սեմինարների, դասընթացների, շնորհանդեսների, աշխատանքային հանդիպումների և այլն (այցեմասնակցությունների թիվը՝ 661, այդ թվում՝ 2013 թվականին՝ 78 (131), 2014 թվականին՝ 61 (240) և 2015 թվականին՝ 92 (290)):

Կադրերի պատրաստման և վերապատրաստման գործընթացի արդյունավետությունը բարձրացնելու նպատակով, շարունակվել են նաև Ծառայությունում պարբերաբար կազմակերպվող սեմինար-խորհրդակցություններն ու դասընթացները, ինչպես օտարերկրյա փորձագետների, այնպես և Ծառայության աշխատակիցների դասավանդմամբ և մասնակցությամբ: Ըստ այդմ, հաշվետու ժամանակահատվածում Ծառայությունում կազմակերպվել են ընդհանուր թվով 43 սեմինար-խորհրդակցություններ, որոնց Ծառայության աշխատակիցների կողմից այցեմասնակցությունների թիվը կազմել է 1 042, այդ թվում՝ 2013 թվականին՝ 6 (112), 2014 թվականին՝ 9 (249) և 2015 թվականին՝ 28 (681)):

Հաշվետու ժամանակահատվածում Ծառայություն են այցելել թվով 49 հանձնախմբեր և 103 փորձագետներ (այդ թվում, 2013 թվականին՝ 15 (30), 2014 թվականին՝ 8 (17), 2015 թվականին՝ 26 (56)), ի մասնավորի.

2013 թվականին Ծառայություն է այցելել 15 հանձնախումբ, 30 փորձագետ Դանիայի վիճակագրական ծառայությունից, Գերմանիայի վիճակագրական ծառայությունից, Եվրամիության վիճակագրական ծառայությունից (Եվրոստատ), ԱՄՆ Հաշվառումների բյուրոյից, Համաշխարհային բանկից, Վրաստանի ազգային վիճակագրական ծառայությունից, ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողովից, ՄԱԿ-ի Կրթության, գիտության և մշակույթի կազմակերպությունից, Ռուսաստանի պետական վիճակագրության դաշնային ծառայությունից, Արժույթի միջազգային հիմնադրամից, ՄԱԿ-ի Պարենի և գյուղատնտեսության կազմակերպությունից, Ինոգեյթ տեխնիկական քարտուղարությունից, Իրանի Իսլամական Հանրապետության վիճակագրական կենտրոնից, «Աջակցություն Հայաստանի ազգային վիճակագրական ծառայությանը Թվինինգ ծրագրի միջոցով» ԵՄ Թվինինգ ծրագրի «Գյուղատնտեսության համատարած հաշվառում» բաղադրիչի շրջանակում խորհրդատվության

ցուցաբերման, «Աջակցություն Հայաստանի ազգային վիճակագրական ծառայությանը ԹՎԻՆԻՆԳ ծրագրի միջոցով» ԵՄ ԹՎԻՆԻՆԳ ծրագրի կառավարող կոմիտեի 9-րդ նիստին և ծրագրի փակման արարողությանը մասնակցելու, Ծառայության համագործակցության ռազմավարության, գլոբալ գնահատման/գործընկերների կողմից գնահատման և նախորդ գլոբալ գնահատումից հետո առաջընթացի, հաջորդ ԵՄ ԹՎԻՆԻՆԳ ծրագրի վերաբերյալ հարցերը քննարկելու, 2011 թվականի Հայաստանի մարդահամարի տվյալները վիճակագրական հաշվետվություններում ներկայացնելու վերաբերյալ աջակցություն ցուցաբերելու, Միջազգային գլոբալ համադրումների ծրագրի շրջանակում քննարկումներ իրականացնելու, ԵՄ ԹՎԻՆԻՆԳ ծրագրի վերաբերյալ հարցերի շուրջ քննարկումներին և ԵՄ-Հայաստան առևտրի, տնտեսական և համապատասխան իրավական հարցերով համագործակցության ենթակոմիտեի 12-րդ նիստին մասնակցելու, Հազարամյակի Զարգացման նպատակների և այլ կրթական ցուցանիշների վերաբերյալ ազգային ներուժի ամրապնդման շուրջ քննարկումներ իրականացնելու, «Մարդահամարներ և համատարած հաշվառումներ» ծրագրի շրջանակում մարդահամարի արդյունքների հրապարակման և տարածման, ժողովրդագրական ցուցանիշների միջմարդահամարային հաշվարկների, գյուղատնտեսական համատարած հաշվառման և այլ հարցերի շուրջ քննարկումներ իրականացնելու, շինարարության գների ինդեքսները և դրանց հաշվառման մեթոդաբանությունը քննարկելու, աշխատուժի ընտրանքային հետազոտության ընտրանքի մեթոդաբանությունը քննարկելու, 2013 թվականի Հայաստանի փորձնական ԳՀՀ և 2014 թվականի Հայաստանի ԳՀՀ իրականացման աշխատանքների շրջանակում խորհրդատվական աջակցություն ցուցաբերելու, էներգետիկ վիճակագրության գործողությունների հաստատված ծրագրի իրականացման, ՀՀ ԱՎԾ և Իրանի Իսլամական Հանրապետության վիճակագրական կենտրոնի միջև համագործակցության մասին փոխըմբռնման հուշագրի ստորագրման նպատակով:

2014 թվականին Ծառայություն է այցելել 8 հանձնախումբ, 17 փորձագետ Եվրոստատից, ՄԱԿ-ի արդյունաբերական զարգացման կազմակերպությունից (UNIDO), Համաշխարհային բանկից, Դանիայի վիճակագրական ծառայությունից, Եվրասիական տնտեսական հանձնաժողովից, ԱՄՆ-ի Հաշվառումների բյուրոյից, ԱՄՆ-ի Գյուղատնտեսության դեպարտամենտից, ՄԱԿ-ի Պարենի և Գյուղատնտեսության կազմակերպությունից, ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողովից, ՄԱԿ-ի վիճակագրության բաժնից, Շվեդիայի վիճակագրությունից, Թեթև փորձագիտական գնահատում (Light Peer Review) իրականացնելու, ԱՊՀ երկրների համար Հարմոնիզացված արդյունաբերական վիճակագրության գծով տարածաշրջանային նախագծի շրջանակում տարեկան հետազոտության հարցաթերթի օգտագործման հնարավորությունների շուրջ քննարկումներ իրականացնելու, «Աղքատության բազմաչափ ինդեքսի հաշվարկ՝ 2012թ. տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջական հետազոտության տվյալների հիման վրա» թեմայով ուսումնական դասընթաց անցկացնելու, երկրորդ ԵՄ ԹՎԻՆԻՆԳ ծրագրի շրջանակում փաստահավաք առաքելություն իրականացնելու, միգրացիայի վիճակագրության հատվածի գնահատում իրականացնելու, Հայաստանի Հանրապետության՝ Մաքսային Միությանը և Միասնական տնտեսական տարածքին անդամակցության նպատակով վիճակագրության ոլորտում կազմակերպչական և

մեթոդաբանական հարցերով հանդիպումներ և խորհրդատվություններ իրականացնելու, «Ժողովրդագրական վերլուծություններ» խորագրով սեմինար անցկացնելու, ԳՀՀ իրականացմանն օժանդակելու, «Հայաստանում ձեռնարկատիրական վիճակագրության զարգացումն ըստ գենդերի» խորագրով սեմինար անցկացնելու նպատակով:

2015 թվականին Ծառայություն է այցելել 26 հանձնախումբ, 56 փորձագետ Դանիայի վիճակագրական ծառայությունից, Համաշխարհային բանկից, ԱՄՆ-ի Հաշվառումների բյուրոյից, Նորվեգիայի վիճակագրական ծառայությունից, Աշխատանքի համաշխարհային կազմակերպությունից, Եվրասիական տնտեսական հանձնաժողովից, ՄԱԿ-ի Պարենի և Գյուղատնտեսության կազմակերպությունից, Եվրոստատից, ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողովից, ՄԱԿ-ի վիճակագրության բաժնից, Եվրոպական ազատ առևտրի ասոցիացիայից, ԱՄՆ-ի Գյուղատնտեսության դեպարտամենտից, Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերությունից (GIZ), Իտալիայի վիճակագրական ծառայությունից, Ֆինլանդիայի վիճակագրական ծառայությունից, Լիտվայի վիճակագրական ծառայությունից, երկրորդ ԵՄ ԹՎԻՆԻՆԳ ծրագրի շրջանակում գործողությունների պլանը քննարկելու, Հայաստանի Հանրապետության աղքատության քարտեզագրմանն առնչվող հարցերի քննարկելու, «Բնակչության կանխատեսումներ» խորագրով սեմինար անցկացնելու, որակի ապահովման շրջանակի և Ընդհանուր վիճակագրական բիզնես գործընթացի մոդելի գծով խորհրդատվական աջակցություն ցուցաբերելու, աղքատության գնահատման վերաբերյալ քննարկումներ իրականացնելու և սեմինար անցկացնելու, երեխայի աշխատանքի հետազոտության հարցերով դասընթաց անցկացնելու, Ազգային ռազմավարության ծրագրի համար Համաշխարհային Բանկի ECASAT բազմադոնոր Տրաստ հիմնադրամի միջոցով Ծառայությանը հնարավոր աջակցություն ցուցաբերելու հետ կապված հարցերը քննարկելու, «Ապրանքների արտաքին և փոխադարձ առևտրի տվյալների բազաների ձևավորման փորձի փոխանակման» շրջանակում ապրանքների արտաքին և փոխադարձ առևտրի տվյալների բազաների կատարելագործման հարցերը քննարկելու, GCP/ARM/006/EC «ENPARD տեխնիկական աջակցություն Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարությանը» ծրագրի շրջանակում գյուղատնտեսական համատարած հաշվառման գծով աջակցություն ցուցաբերելու, Ծառայության և Եվրասիական տնտեսական հանձնաժողովի համագործակցության մի շարք հարցեր քննարկելու, երկրորդ ԵՄ ԹՎԻՆԻՆԳ ծրագրին առնչվող հարցերը քննարկելու, Ընդհանուր վիճակագրական օրենքի (GSL) խմբագրական խորհրդի երկրորդ հանդիպմանը մասնակցելու, ԵԱՏՄ անդամ երկրների «Ծախսեր-թողարկում» աղյուսակները վերլուծելու, «Հայաստանի ազգային վիճակագրական համակարգի ամրապնդում – փուլ II» ԵՄ ԹՎԻՆԻՆԳ ծրագրի բացման արարողությանը մասնակցելու, գյուղատնտեսական համատարած հաշվառման տարբեր հարցերի վերաբերյալ աջակցություն ցուցաբերելու, «Հայաստանի ազգային վիճակագրական համակարգի ամրապնդում – փուլ II» ԵՄ ԹՎԻՆԻՆԳ ծրագրի «Աղքատության վիճակագրություն» բաղադրիչի շրջանակում աջակցություն ցուցաբերելու, «Տուրիզմի սատելիտային հաշիվների ներդրման իրագործելիության ուսումնասիրություն» թեմայով քննարկումներ իրականացնելու, «Հայաստանի ազգային վիճակագրական համակարգի ամրապնդում – փուլ II» ԵՄ ԹՎԻՆԻՆԳ ծրագրի «Ժողովրդագրական վիճակագրություն» բաղադրիչի շրջանակում աջակցություն

ցուցաբերելու, ԵՄ - Հայաստան առևտրի, տնտեսական և համապատասխան իրավական հարցերով համագործակցության ենթակոմիտեի 14-րդ նիստին մասնակցելու, «Հայաստանի ազգային վիճակագրական համակարգի ամրապնդում – փուլ II» ԵՄ ԹՎԻՆԻՆԳ ծրագրի «Ինովացիոն վիճակագրություն» բաղադրիչի շրջանակում աջակցություն ցուցաբերելու, «Հայաստանի ազգային վիճակագրական համակարգի ամրապնդում – II փուլ» ԵՄ ԹՎԻՆԻՆԳ ծրագրի «Վիճակագրական տեղեկատվության տարածման համակարգ» բաղադրիչի շրջանակում աջակցություն ցուցաբերելու, սեռային վիճակագրության գծով ուսուցում անցկացնելու, «Հայաստանի ազգային վիճակագրական համակարգի ամրապնդում – II փուլ» ԵՄ ԹՎԻՆԻՆԳ ծրագրի կառավարող կոմիտեի առաջին նիստին մասնակցելու, ԳՀՀ տվյալների մշակման և հրապարակումների նախապատրաստման ընթացիկ իրավիճակը քննարկելու և աջակցություն ցուցաբերելու նպատակով:

Բոլոր այցելություններն եղել են արդյունավետ և դրական ազդեցություն են գործել Ծառայության աշխատանքների հետագա բարելավման և զարգացման վրա:

Ծառայությունը Եվրոպական հարևանության «ԵՄ ստանդարտներին համապատասխանող վիճակագրական մեթոդների ընդունում և Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության արդիականացում» ծրագրի շրջանակում, հիմնվելով ԵՄ փորձագետների կողմից Հայաստանի վիճակագրական համակարգի ընդհանուր գնահատման վրա, վիճակագրական համապատասխան ոլորտներում եվրոպական ստանդարտներին համապատասխանելու նպատակով իրականացրել է կարճաժամկետ և երկարաժամկետ ռազմավարության մշակման և իրականացման, բիզնես-ռեգիստրի որակի և ընդգրկման բարելավման, Պարենի և գյուղատնտեսության կազմակերպության ուղեցույցների համաձայն գյուղատնտեսական համատարած հաշվառման նախապատրաստման և իրականացման աշխատանքներ:

- ԵՀԲ ՀՀ-ԵՄ գործողությունների ծրագրի կատարումն ապահովող 2012-2013թթ. միջոցառումների ներքո՝ Միգրացիոն գործառույթներ իրականացնող պետական մարմինների տեղեկատվական համակարգերը մեկ միասնական համակարգում ներառելուն ուղղված աշխատանքների մեկնարկի, Հայաստանի ազգային հաշիվների համակարգում «Տնտեսական գործունեության տեսակների» Հայաստանի դասակարգչի 2-րդ վերանայված տարբերակի ներդրման, «Անհատական սպառման դասակարգիչ ըստ նպատակների» (COICOP) դասակարգչի ներդրման, «Աշխատուժի վերաբերյալ ընտրանքային հետազոտություն» ԵՄ կանոնակարգերի ուսումնասիրման ուղղությամբ:

1. «Հայաստանի Հանրապետության միգրացիայի պետական կարգավորման քաղաքականության հայեցակարգի իրականացման 2012-2016 թվականների գործողությունների ծրագիրը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ հաստատված միջգերատեսչական հանձնաժողովի կազմում ընդգրկվելով, Ծառայությունը մասնակցել է գործողությունների ծրագրով նախատեսված միջոցառումների իրականացման փուլերին:

2. Շարունակվել են «Աշխատուժի վերաբերյալ ընտրանքային հետազոտություն» ԵՄ կանոնակարգերի ուսումնասիրման աշխատանքները: «Աշխատուժի վերաբերյալ ընտրանքային հետազոտություն» ԵՄ ուսումնասիրված կանոնակարգերի հիման վրա նախատեսվել է 2014

թվականից սկսած իրականացնել աշխատուժի ընտրանքային հետազոտություն՝ ընդգրկելով Հայաստանի Հանրապետության ողջ տարածքը: Միաժամանակ, Աշխատանքի միջազգային կազմակերպության հետ նախնական համաձայնություն է ձեռք բերվել 2014 թվականի չորրորդ եռամսյակում շարունակել իրականացնել 2012 թվականից սկիզբ առած «Դպրոցից դեպի աշխատանք» միանվագ հետազոտության երկրորդ շրջափուլը՝ 15-29 տարեկան երիտասարդների շրջանում՝ հիմք ընդունելով «Երիտասարդների աշխատանքի շուկա մուտք գործելու վերաբերյալ 2009 թվականի միանվագ մոդուլի տեխնիկական պահանջներն ընդունելու վերաբերյալ» ԵՄ կանոնակարգը:

- ԵՀԲ ՀՀ-ԵՄ գործողությունների ծրագրի կատարումն ապահովող 2014-2015 թվականների միջոցառումների ներքո՝ «Տնային տնտեսությունների բյուջեի հետազոտություն/ եկամուտների և կենսապայմանների վիճակագրություն» ԵՄ երկու կանոնակարգերի ուսումնասիրման, փորձարկման և տեղայնացման ուղղությամբ:

Իրականացվել են ԵՄ կանոնակարգերի ուսումնասիրման աշխատանքները, մասնավորապես, ուսումնասիրվել և թարգմանվել են «Համայնքի եկամուտների և կենսապայմանների վիճակագրության վերաբերյալ 2003 թվականի հունիսի 16-ի Եվրոպական Պարլամենտի և Խորհրդի թիվ 1177/2003/EC կանոնակարգը» և «Սահմանումների և արդիականացված սահմանումների հետ կապված Համայնքի եկամուտների և կենսապայմանների վիճակագրության վերաբերյալ Եվրոպական Պարլամենտի և Խորհրդի թիվ 1177/2003 կանոնակարգի իրականացման վերաբերյալ Հանձնաժողովի 2003 թվականի հոկտեմբերի 21-ի թիվ 1980/2003/EC կանոնակարգը»:

«Հայաստանի ազգային վիճակագրական համակարգի ամրապնդում - II փուլ» խորագրով երկրորդ ԵՄ ԹՎԻՆԻՆԳ ծրագրի ներքո տնային տնտեսությունների հետազոտություններ/ աղքատության վիճակագրություն բաղադրիչի շրջանակում, որը նախատեսում է ուսումնասիրվող կանոնակարգերի ներդրումը սոցիալական բացառումների մոդուլի մշակման ժամանակ, Իտալիայի և Ֆինլանդիայի վիճակագրական ծառայությունների փորձագետների օժանդակությամբ կազմվել է սոցիալական բացառումների վիճակագրության մշակման պլանը և փորձնական հետազոտության համար նոր հարցաթերթի նախագիծը, ինչպես նաև որոշվել է փորձնական հետազոտությունն անցկացնել 48 տնային տնտեսություններում, որոնք ընտրվել էին հուլիսի ընտրանքից: Նշյալ բաղադրիչի շրջանակում իրականացվել են հարցազրուցավարների հրահանգավորումը և հոկտեմբերին բուն հետազոտությունը (դաշտային աշխատանքները): Արդյունքում հավաքագրվել են տվյալներ 48 տնային տնտեսություններից, որոնք մուտքագրվել են և ստեղծվել է հավաքագրված տվյալների բազա: Տվյալները ներկայացվել են փորձագետներին ելքային աղյուսակներ մշակելու և տվյալների որակը ստուգելու համար: Փորձագետներին ներկայացվել են նաև սոցիալական բացառումների փորձնական հետազոտության արդյունքների վերլուծությունը և համեմատությունը ՏՏԿԱՀ-ի հուլիսի տվյալների հետ: Արդյունքում որոշվել է, որ 2016 թվականին կայանալիք ՏՏԿԱՀ-ի հարցաթերթում ներառել սոցիալական բացառումների վերաբերյալ հարցերը որպես մոդուլ, իսկ 2017 թվականից սկսած ամբողջովին ինտեգրել ՏՏԿԱՀ-ի հարցաթերթում:



2013 թվականին շարունակվել է «Աջակցություն Հայաստանի ազգային վիճակագրական ծառայությանը Թվինինգ ծրագրի միջոցով» ԵՄ Թվինինգ ծրագրի իրականացումը, որի նպատակն էր աջակցել Հայաստանի վիճակագրության արդիականացմանը, ԵՄ չափանիշներին մոտարկված մեթոդաբանությունների ներդրմանը, ԵՄ երկրների հետ ուղղակիորեն համադրելի վիճակագրության թողարկմանը: Ծրագրի գլխավոր գործընկերն էր՝ Դանիայի վիճակագրական ծառայությունը, կրտսեր գործընկերը՝ Գերմանիայի վիճակագրական ծառայությունը, մասնակիցներն են՝ Շվեդիայի, Ֆինլանդիայի, Լատվիայի և Լիտվայի վիճակագրական ծառայությունները: Ծրագիրը շարունակվել է մինչև 2013 թվականի փետրվարի 28-ը:

Ծառայության և ԵՄ փորձագետների միջև երկու տարվա ընթացքում արդյունավետ ծրագրի իրականացումը նշվեց 2013 թվականի փետրվարի 13-ին՝ ծրագրի փակման արարողությանը, որի ժամանակ «Աջակցություն Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայությանը Թվինինգի միջոցով» ԵՄ կողմից ֆինանսավորվող ծրագիրն ամփոփեց իր աշխատանքը Հայաստանում:

Թվինինգ ծրագիրը նպաստեց Հայաստանի վիճակագրության մոտարկմանը միջազգային չափանիշներին՝ մի շարք կարևոր վիճակագրական ոլորտների համար: ԵՄ Թվինինգ ծրագրի ամենանշանակալից արդյուքները հետևյալն են.

- ներդրվել է Ծառայության ARMSTATBANK.AM հանրամատչելի տվյալների բազան, որը հասանելի է հանրությանը: ARMSTATBANK.AM-ը՝ հիմնված օգտվողի համար շատ հարմարավետ PX-Web ծրագրի վրա հնարավորություն է ընձեռել վիճակագրության սպառողներին ներբեռնել վիճակագրական տվյալները իրենց իսկ նախընտրելի ձևաչափերով: ARMSTATBANK.AM-ը թույլ է տալիս ընտրել սպառողին հետաքրքրող աղյուսակները և ցուցանիշները շատ պարզ ընթացակարգով, տրամադրում է արագ և մատչելի հասանելիություն վիճակագրական տեղեկատվությանը, և հնարավորություն է ընձեռում ներբեռնել տվյալները MS Excel, xml կամ այլ ձևաչափերով, ինչպես նաև ստեղծել գծապատկերներ և աղյուսակներ, որոնք կառուցված են սպառողների պահանջների համապատասխան: Հայաստանն առաջին երկիրն է աշխարհում, որն օգտագործել է PX-Web 2012 թվականի տարբերակը:
- հասանելի է դարձել որակի հոչակագրերը բոլոր վիճակագրական արտադրանքների համար: Ծառայության կայքէջում բացված «Աջակցություն Հայաստանի ազգային վիճակագրական ծառայությանը Թվինինգի միջոցով» խորագրով ԵՄ Թվինինգ ծրագիր և «Փաստաթղթավորում» բաժիններում գետեղվել են Թվինինգ ծրագրի վերաբերյալ նյութերը և «որակի կառավարում» բաղադրիչի շրջանակում մշակված որակի հոչակագրերը՝ թվով 136 հայերեն և անգլերեն:
- արձանագրվել է վիճակագրական տեղեկություն ներկայացնողների (ռեսպոնդենտների) ծանրաբեռնվածության 49.3% նվազում:
- բարելավվել է ազգային հաշիվների ընդգրկումը և այդպիսով ՀՆԱ-ի աճի գնահատումները,
- մշակվել է Հայաստանում առաջին անգամ իրականացվելիք ԳՀՀ-ի համար անհրաժեշտ մեթոդաբանությունը,

- Հայաստանի սպառողական գների ինդեքսը ներդաշնակեցվել է ԵՄ չափանիշներին և ներդրվել 2014 թվականին,
- մշակվել է մեթոդաբանություն կազմակերպություններում և պետական մարմիններում նոր տեղեկատվական և հեռահաղորդակցման տեխնոլոգիաների (S&S) օգտագործման վիճակագրության վարման համար:

«Աջակցություն Հայաստանի ազգային վիճակագրական ծառայությանը» ԵՄ ԹՎԻՆԻՆԳ ծրագրի արդյունքներով մշակվել են ճանապարհային քարտեզներ ըստ ծրագրի բաղադրիչների, ներկայացնելով յուրաքանչյուր բաղադրիչի համար հետագա իրականացման առաջարկություններ և նկարագրելով հետագա քայլերն ու հեռանկարները:

ԵՄ ԹՎԻՆԻՆԳ գործիքի ներքո Ծառայության կողմից մշակվել և ներկայացվել է «Հայաստանի ազգային վիճակագրական ծառայության ամրապնդում» խորագրով երկրորդ ԹՎԻՆԻՆԳի ծրագրային առաջարկը, որի նպատակն է ամրապնդել Հայաստանի ազգային վիճակագրական ծառայության ներուժը: Ծրագրի առաջարկը՝ «Ֆիշը», հավանության է արժանացել Եվրոստատի կողմից և ներառում է հետևյալ բաղադրիչները. վիճակագրական տեղեկատվության տարածում, ժողովրդագրական վիճակագրություն, աշխատանքի շուկայի վիճակագրություն, աղքատության վիճակագրություն, գիտահետազոտական աշխատանքների վիճակագրություն և շրջակա միջավայրի վիճակագրություն:

ԵՄ ԹՎԻՆԻՆԳ գործիքի ներքո մշակվել և ներկայացվել է նաև «Տեղեկատվական և հեռահաղորդակցման տեխնոլոգիաներ» խորագրով ծրագրի շրջանակում տեղեկատվության էլեկտրոնային հավաքագրման, մշակման, պահպանման և տարածման ինտեգրացված վիճակագրական տեղեկատվական համակարգի ստեղծման վերաբերյալ ծրագրային առաջարկը:

2015 թվականի սեպտեմբերի 15-ին Հայաստանում պաշտոնապես մեկնարկել է «Հայաստանի ազգային վիճակագրական համակարգի ամրապնդում - II փուլ» ԵՄ/ԹՎԻՆԻՆԳ ծրագիրը: Ծրագրի նպատակն է աջակցել Ծառայությանը՝ ինստիտուցիոնալ ԹՎԻՆԻՆԳ ծրագրի միջոցով արդիականացնել պաշտոնական վիճակագրության հայաստանյան համակարգի կոնկրետ տարրերը: Սույն նպատակը կիրագործվի՝ ներդնելով ԵՄ ստանդարտներին համապատասխանեցված համապարփակ տարածման ռազմավարություն և կազմման մեթոդաբանություններ: Ծրագրի իրականացման ընթացքում առանցքային կլինի վիճակագրական տեղեկատվության արտադրման նպատակով առկա վարչական ռեգիստրների օգտագործումը:

Ծրագիրը կաջակցի Հայաստանին արտադրել ԵՄ մեթոդաբանությանը համապատասխան վիճակագրություն, հետևաբար վիճակագրությունն ուղղակիորեն համադրելի կլինի եվրոպական երկրների վիճակագրության հետ, ինչպես նաև աշխարհով մեկ: Բարելավված վիճակագրությունը հետագայում կապահովի արժեքավոր տեղեկատվություն հայաստանյան լայն հանրության և մասնավորապես, քաղաքականություն մշակողների համար:

«Հայաստանի ազգային վիճակագրական համակարգի ամրապնդում - II փուլ» ԵՄ/ԹՎԻՆԻՆԳ ծրագրի բաղադրիչներն են.

- վիճակագրական տեղեկատվության տարածման համակարգ,
- ժողովրդագրական վիճակագրություն

- աշխատանքի շուկայի վիճակագրություն
- աղքատության վիճակագրություն
- ինովացիոն վիճակագրություն
- ջրի հաշիվներ:

Ծրագրի իրականացման ժամանակահատվածն է 2015 թվականի օգոստոսի 8-ից մինչև 2017 թվականի օգոստոսի 7-ը: Ծրագրի ակնկալվող արդյունքներն են.

- մշակված տարածման ռազմավարություն, սպառողների ուժեղացված ներգրավվածություն և տարածման համակարգի ընդհանուր բարելավում,
- կենսական վիճակագրության համար բարելավված հավաքագրման մեխանիզմներ և միգրացիայի վիճակագրության վերակազմակերպված համակարգ,
- հաշվարկված և հրապարակված աշխատանքի գին, աշխատանքի գնի ինդեքս, ինչպես նաև վաստակների վերաբերյալ կառուցվածքային վիճակագրություն,
- ներդրված, հաշվարկված և հրապարակված սոցիալական բացառումների վիճակագրություն,
- ներդրված և հրապարակված նորարարական վիճակագրության մեթոդաբանություն,
- ջրի կազմված հաշիվներ:

Ծրագիրն իրականացվում է Դանիայի վիճակագրության և Ֆինլանդիայի, Իտալիայի, Լիտվայի վիճակագրությունների հետ համագործակցությամբ:

2015 թվականի ընթացքում ծրագիրն արդեն իսկ եզրափակել է առաջին եռամսյակը և իրականացվել են ծրագրի վեց ոլորտներից թվով չորսի գնահատման առաքելություններ: Դրանք առնչվել են տեղեկատվության տարածմանը, ժողովրդագրական վիճակագրությանը, աղքատության վիճակագրությանը և ինովացիոն վիճակագրությանը: Նշյալ չորս ոլորտներում գնահատվել է ընթացիկ իրավիճակը, ներկայացվել են առաջարկություններ և մշակվել են ճանապարհային քարտեզներ հետագա աշխատանքների համար: Որպես կանոն, բոլոր բաղադրիչների շրջանակներում կազմակերպվել են հանդիպումներ համապատասխան շահառուների հետ մասնակցելու շնորհանդեսներին և խնդրո առարկա քննարկումներին:

Ծառայության պաշտոնական կայքէջում ([www.armstat.am](http://www.armstat.am)) բացվել է «Հայաստանի ազգային վիճակագրական համակարգի ամրապնդում - II փուլ» խորագրով ԵՄ ԹՎԻՆԻՆԳ ծրագիր էջը (<http://www.armstat.am/am/?nid=576>), որտեղ զետեղվել են ԹՎԻՆԻՆԳ ծրագրի վերաբերյալ բոլոր համապատասխան փաստաթղթերը և նյութերը հայերեն և անգլերեն: Ծրագիրն ունի նաև ֆեյսբուքյան էջ, որը կանոնավոր կերպով թարմացվում է:

2014 և 2015 թվականներին շարունակվել է 2011-2013 թվականներին իրականացված «Աջակցություն Հայաստանի ազգային վիճակագրական ծառայությանը ԹՎԻՆԻՆԳ ծրագրի միջոցով» ԵՄ ԹՎԻՆԻՆԳ ծրագրի արդյունքներով մշակված ճանապարհային քարտեզների իրականացումն ըստ ծրագրի բաղադրիչների:

2015 թվականին Ծառայությունը Նորվեգիայի վիճակագրական ծառայության հետ համատեղ իրականացրել է «Որակի կառավարում» երկկողմանի համագործակցության ծրագիր, որի նպատակն էր ուսումնասիրել Նորվեգիայի լավագույն փորձը «Ընդհանուր Վիճակագրական Բիզնես-գործընթացի Մոդելի (GSBPM)» ներդրման ուղղությամբ, ինչպես նաև ստանալ խորհրդատվական աջակցություն որակի կառավարման, որակի ապահովման

շրջանակի և ընդհանուր վիճակագրական բիզնես գործընթացի մոդելի (GSBPM) գծով: 2013 թվականին GSBPM-ի 5.0 տարբերակը թարգմանվել է հայերեն և ներկայումս 80 վիճակագրական արտադրանք նկարագրված են ըստ GSBPM-ի, որից 60-ը խմբավորված են 19 խմբերի, օրինակ, էլեկտրատրանսպորտ (մետրո, ճոպանուղի, տրոլեյբուսներ):

2013 թվականին «Արմենիահինֆո» ծրագրի շրջանակում Ծառայության կողմից կազմակերպվել են դասընթացներ Երևան քաղաքում, Հայաստանի Հանրապետության Արմավիրի, Կոտայքի, Արարատի և Արագածոտնի մարզերում, որոնց մասնակցել են թվով 63 աշխատակից՝ 44 աշխատակից Ծառայության գործակալություններից, 15 աշխատակից մարզպետարաններից, 2 աշխատակից Երևանի քաղաքապետարանից և 2 աշխատակից Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարությունից:

Ընդհանուր առմամբ, վերապատրաստվել է թվով 131 աշխատակից՝ 94 աշխատակից Ծառայության գործակալություններից, 35 աշխատակից մարզպետարաններից և 2 աշխատակից Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարությունից: Ծառայության կողմից մշակված «Ձեռնարկ Արմենիահինֆո-տվյալների բազա սպառողների համար» գրքույկը, որտեղ մանրամասն ներկայացված են տեղեկատվական բազայից օգտվելու գործիքները, տրամադրվել է վերապատրաստման դասընթացների բոլոր մասնակիցներին:

2013 թվականին տեղադրվել են տվյալների բազաներ գյուղատնտեսության և անասնաբուծության գծով Երևան քաղաքում, Հայաստանի Հանրապետության Արագածոտնի, Արմավիրի, Արարատի և Կոտայքի մարզային գործակալություններում, որտեղ նաև անցկացվել են դասընթացներ տվյալների բազաների հետ աշխատելու նպատակով:

Իրականացվել են նախապատրաստական աշխատանքներ երկու նոր տվյալների բազաների՝ «Ժողովրդագրական և առողջության հարցերի հետազոտություն» և «Մարզերը թվերով» ստեղծման ուղղությամբ՝ Արմենիահինֆո տվյալների բազայի ձևաչափով ներկայացնելու նպատակով, որոնք առցանց հասանելի են [www.armdevinfo.am](http://www.armdevinfo.am) կայքէջում:

Ծառայությունն օժանդակություն է ցուցաբերել «Արմենիահինֆո» ծրագրի շրջանակում էլեկտրոնային ուսուցման (e-learning) աշխատանքների իրականացմանը: Էլեկտրոնային ուսուցումն արդյունավետ կազմակերպելու և տեսական գիտելիքներն ամրապնդելու նպատակով յուրաքանչյուր թեմայի վերջում ավելացվել է գործնական աշխատանք հարցերի տեսքով:

2013 թվականի նոյեմբերի 7-ին «Արմենիահինֆո» տեղեկատվական բազան և [www.armdevinfo.am](http://www.armdevinfo.am) կայքէջը ներկայացվել են Հայաստանի Հանրապետության հանրային խորհրդի նիստում:

2014 թվականին «Արմենիահինֆո» ծրագրի շրջանակում ստացած գիտելիքների և հմտությունների ու ձեռք բերված փորձի հիման վրա՝ Ղազախստանի ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի աջակցությամբ Ծառայության կողմից տեղի է ունեցել այցելություն Ուստ-Կամենոգորսկ քաղաք, որի նպատակն էր՝ ներկայացնել «Արմենիահինֆո» տեղեկատվական համակարգի ներդրման Հայաստանի փորձը, ցուցաբերել տեխնիկական աջակցություն Դեվինֆո տեղեկատվական համակարգի մշակման և ներդրման ուղղությամբ Արևելյան Ղազախստանի մարզի համար: Ծառայության կողմից մշակվել է «Ձեռնարկ Արմենիահինֆո –

տվյալների բազա ադմինիստրատորների համար» գրքույկը, որը տեղադրվել է Ծառայության կայքէջում:

2014 թվականի ընթացքում ընդլայնվել և արդիականացվել են տվյալների բազաները «Արմենիահինֆո» համակարգի շրջանակում: «Արմենիահինֆո» ծրագրի շրջանակում Ծառայությունն օժանդակություն է ցուցաբերել էլեկտրոնային ուսուցման (e-learning) աշխատանքների իրականացմանը, մասնավորապես, Գյումրու «Տեխնոպարկ» ՏՏ-ի ընկերությանը՝ մշակելու «Դեվինֆո 6.0 Սպառող և Տվյալների բազայի ադմինիստրացիա» խորագրով դասընթացը, որը 2014 թվականի հոկտեմբերի 8-ին ներկայացվել է հանրությանը և տեղադրվել ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի ու Ծառայության կայքէջերում:

2015 թվականին շարունակվել է Ծառայության փորձագետների կողմից տեխնիկական աջակցության ցուցաբերումը Դեվինֆո տեղեկատվական համակարգի մշակման և ներդրման ուղղությամբ Արևելյան Ղազախստանի մարզի համար:

2015 թվականի ընթացքում արդիականացվել են տվյալների բազաները «Արմենիահինֆո» համակարգի շրջանակում:

ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի օժանդակությամբ 2013 թվականի հուլիսի 1-ից մինչև 2014 թվականի հունիսի 30-ն իրականացվել է ՏՏԿԱՀ-ին կից «Երեխաների կարիքները» խորագրով մոդուլային հետազոտություն, որի արդյունքները զետեղվել են «Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, 2014» և «Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, 2015» վիճակագրական-վերլուծական զեկույցների «Մանկական աղքատություն» գլխում:

ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի օժանդակությամբ 2015 թվականի հուլիսի 1-ից իրականացվում է (ավարտը՝ 2016 թվականի հունիսի 30-ին) ՏՏԿԱՀ-ին կից «Երեխաների կարիքները» խորագրով մոդուլային երկրորդ հետազոտությունը՝ վերանայված հարցաթերթով:

ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի օժանդակությամբ 2014 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը ՏՏԿԱՀ-ի շրջանակում բոլոր տնային տնտեսություններում իրականացվել են մինչև 5 տարեկան երեխաների կշռի և հասակի չափագրումներ, որոնց արդյունքները հրապարակվել են «Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, 2015» վիճակագրական-վերլուծական զեկույցի «Մանկական աղքատություն» գլխում:

2015 թվականին մշակվել և Համաշխարհային բանկի փորձագետներին է ներկայացվել Ծառայության Ազգային ռազմավարության ծրագրի իրականացման ապահովման համար Համաշխարհային բանկի «Բազմադոնոր ծրագրային Տրաստ Հիմնադրամ՝ աջակցելու վիճակագրական կարողությունների ամրապնդմանը Արևելյան Եվրոպայի և ԱՊՀ երկրներում (ECASTAT)» բազմադոնոր ծրագրային Տրաստ հիմնադրամի միջոցով Ծառայությանը հնարավոր աջակցություն ցուցաբերելու համար ECASTAT-ի ծրագրային առաջարկը:

2014 թվականին տեղի է ունեցել Հայաստանի Հանրապետությունում Եվրոպական վիճակագրության փորձառության օրենսգրքի իրականացման թեթև փորձագիտական գնահատումը:

Ծառայության թեթև փորձագիտական գնահատումը (ԹՓԳ) նախաձեռնվել է Եվրոստատի կողմից ֆինանսավորվող «Եվրոպական հարևանության քաղաքականության

(ԵՀԲ) երկրների վիճակագրական համակարգերի և ընտրված վիճակագրական բնագավառների գնահատում» ծրագրի շրջանակում:

ԹՓԳ-ները հիմնված են ԵՎՀ (Եվրոպական վիճակագրական համակարգի) փորձագիտական գնահատումների կառուցվածքի և ընթացակարգերի վրա և մշակված են թեկնածու երկրների և զարգացած վիճակագրական համակարգ ունեցող երկրների համար: Այս գնահատումների նպատակներն են, մասնավորապես, գնահատել գնահատվող Ազգային վիճակագրական Ինստիտուտի (ԱՎԻ) համապատասխանությունը Եվրոպական վիճակագրության փորձառության օրենսգրքի (ՓՕ) 1-6-րդ և 15-րդ սկզբունքներին, գնահատել ԱՎԻ-ի համակարգման դերը Ազգային վիճակագրական Համակարգի (ԱՎՀ) շրջանակում, կարևորել փոխանցելի փորձերը, որոնք հարմար են խթանելու համապատասխանությունը ՓՕ-ին, և առաջարկել բարելավման գործողություններ ՓՕ-ի բոլոր սկզբունքների համար, որոնք անհրաժեշտ են ՓՕ-ի հետ լիարժեքորեն համապատասխանեցնելու տեսանկյունից:

Ծառայությունը լրացրել է նոր ինքնագնահատման հարցաթերթ Եվրոպական վիճակագրության փորձառության օրենսգրքի իրականացման և հարցաթերթ ԱՎԻ-ների համակարգման դերի վերաբերյալ, որոնք կօգտագործվեն ԵՄ անդամ պետությունների փորձագիտական գնահատումների երկրորդ փուլում:

Գնահատման գործընթացը նախաձեռնվել է Եվրոստատի կողմից՝ Ծառայության 2013 թվականի սեպտեմբերի խնդրանքի հիման վրա: Գնահատումն իրականացվել է երեք փորձագետների կողմից՝ առաջատար փորձագետ Գ.Կոպչ (Գերմանիայի Դաշնային վիճակագրական Գրասենյակի նախկին տնօրեն), Կ.Յունկեր (Եվրոստատ) և Ս.Իրենե Պեդերսեն (Եվրոստատ): Գնահատման առաքելությունը տեղում այցելության ձևով տեղի է ունեցել 2014 թվականի փետրվարի 10-14-ը (հաշվետվությունը տեղադրված է Ծառայության կայքէջում, <http://www.armstat.am/file/doc/99491348.pdf>): Գրավոր նյութերը և Ծառայության կայքէջում հրապարակված փաստաթղթերի հղումները հասանելի են եղել գնահատման առաքելության ընթացքում: Հիմնական փաստաթղթերը ներառել են լրացված ինքնագնահատման հարցաթերթերը (այսինքն՝ համապատասխանությունը ՓՕ-ին և համակարգման դերը), որոնք տրամադրվել են Ծառայության կողմից 2014 թվականի հունվարի կեսերին:

Գնահատման թիմը շատ բարձր է գնահատել լավ նախապատրաստված հանդիպումները և հաղորդակցության թափանցիկությունը, ինչպես Ծառայության անձնակազմի, այնպես էլ գործընկեր և շահառու կազմակերպությունների ներկայացուցիչների հետ ու հույս հայտնել, որ գնահատումն օգտակար կլինի Ծառայության հետագա զարգացման համար: Հայաստանն առաջին երկիրն է Արևելյան Եվրոպայի, Կովկասի և Կենտրոնական Ասիայի երկրների շարքում, որն անցել է ԹՓԳ:

2014 թվականի հոկտեմբերի 13-16-ը Եվրոստատի միգրացիայի հարցերով ավագ փորձագետ՝ Ա.Հերմիի և փորձագետ՝ Ա.Օբլակ Ֆլանդերիի կողմից իրականացվել է Ծառայության միգրացիայի վիճակագրության հատվածի գնահատումը, որի հիմնական նպատակն էր գնահատել Հայաստանում վիճակագրական համակարգի վարչական և տեխնիկական կարողություններն՝ արտադրելու միգրացիայի վիճակագրություն և առաջարկել բարելավման գործողություններ: Գնահատման գործընթացը նախաձեռնվել է Եվրոստատի

կողմից՝ Ծառայության խնդրանքի հիման վրա: Գնահատումը հիմնված է Ծառայության կողմից լրացված ինքնագնահատման հարցաթերթի, որը մշակված է համաձայն 2012 թվականի Եվրոպական Վիճակագրական Համակարգի Որակի Ապահովման Շրջանակի, Ծառայության կողմից տրամադրված և կայքում հրապարակված փաստաթղթերի վրա, որոնք հասանելի են եղել գնահատման առաքելության ընթացքում, ինչպես նաև երկրում այլ ազգային և միջազգային մարմինների հետ տեղի ունեցած հանդիպումների և քննարկումների արդյունքում: Գնահատման արդյունքում պատրաստված հաշվետվությունը տեղադրված է Ծառայության կայքէջում (<http://www.armstat.am/file/doc/99492303.pdf>): Հայաստանն առաջին երկիրն է Արևելյան Եվրոպայի, Կովկասի և Կենտրոնական Ասիայի երկրների շարքում, որն անցել է միգրացիայի վիճակագրության հատվածի գնահատում:

2015 թվականին Ծառայությունը մասնակցել է ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի (UNECE), Եվրոպական ազատ առևտրի ասոցիացիայի (EFTA), Եվրոստատի կողմից կազմակերպված Արևելյան Եվրոպայի, Կովկասի և Կենտրոնական Ասիայի երկրների համար Ընդհանուր վիճակագրական օրենքի խմբագրական խորհրդի և օրենքի մշակման աշխատանքներին:

2015 թվականի հունիսի 15-17-ը ժնկում կայացած ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի Եվրոպական վիճակագիրների կոնֆերանսի 63-րդ հերթական լիակազմ նստաշրջանին համաձայն Եվրոպական Վիճակագիրների Կոնֆերանսի և դրա Բյուրոյի աշխատանքները կառավարող կանոնների կոնֆերանսն ընտրել է իր Բյուրոն երկու տարի ժամկետով՝ 2015 թվականի հունիսից մինչև 2017 թվականի հունիսը: Ծառայության նախագահ՝ Ս. Մնացականյանն ընտրվել է նորակազմ Բյուրոյի փոխնախագահ (Եվրոպական վիճակագիրների կոնֆերանսի Բյուրոյի կազմը 2015-2017 թվականների համար, <http://www.unece.org/stats/cesbureau.html>):

Ծառայությունը վիճակագրության մասով մասնակցել է ՀՀ-ԵՄ առևտրի, տնտեսական և համապատասխան իրավական հարցերով համագործակցության ենթակոմիտեի աշխատանքներին:

2013-2015 թվականներին Ծառայությունն իրականացրել է ԵՄ Վիճակագրական Ծառայության (Եվրոստատ) «Վիճակագրական տվյալների հավաքագրում Եվրոպական հարևանության քաղաքականության Արևելյան (ENP-EAST) երկրներից» խորագրով նախագիծը:

2012-2014 թվականներին Ծառայությունը մասնակցել է Եվրոստատի կողմից կազմակերպված Վիճակագրական Համագործակցության համար ԵՀԲ-Արևելքի 2014-2020 թվականների Ռազմավարության համար աշխատանքային խմբի և փաստաթղթի մշակման աշխատանքներին:

2013 թվականին Ծառայությունը վիճակագրության մասով մասնակցել է Եվրասիական տնտեսական ընկերակցության շրջանակում (ԵվրԱզԷՍ) Մաքսային միությանը Հայաստանի անդամակցելու աշխատանքներին:

2014-2015 թվականներին Ծառայությունը վիճակագրության մասով մասնակցել է Եվրասիական տնտեսական միությանը Հայաստանի անդամակցության հետ կապված աշխատանքներին:

2013 թվականի դեկտեմբերի 6-ին Հայաստանի Հանրապետության վարչապետ Տ. Սարգսյանի ներկայությամբ Ծառայության նախագահ Ս.Մնացականյանը և Իրանի Իսլամական Հանրապետության վիճակագրական կենտրոնի տնօրեն Ա.Ազարը ստորագրեցին համագործակցության մասին փոխըմբռնման հուշագիր, որը պետք է նպաստի երկու երկրների վիճակագրական մարմինների միջև համագործակցության զարգացմանը: Հուշագրի ստորագրումը հնարավորություն է ընձեռելու համագործակցել վիճակագրության տարբեր ուղղություններով՝ վիճակագրական տեղեկատվության և հրապարակումների փոխանակում և տարածում, փոխադարձ օժանդակության ցուցաբերում մեթոդաբանության և տեղեկատվական ու հեռահաղորդակցման տեխնոլոգիաների ոլորտներում:

2014 թվականի հունիսի 30-ին ստորագրվել է Մտադրության նամակ Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության և Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության միջև մի կողմից և Եվրոպական բնապահպանական գործակալության՝ մյուս կողմից, որի նպատակն է սահմանելու Հայաստանի Հանրապետությունում բնապահպանական միասնական տեղեկատվական համակարգի ձևավորման համագործակցության շրջանակները:

Անցած ժամանակահատվածում Ծառայության կողմից իրականացվել են բանակցություններ և քննարկումներ հետագա համագործակցության հնարավորությունների շուրջ՝ 2013 թվականի ԵՄ ԹՎԻՆԻՆԳ գործիքի ներքո «Աջակցություն Հայաստանի ազգային վիճակագրական ծառայությանը ԹՎԻՆԻՆԳ միջոցով» խորագրով ծրագրի շրջանակում իրականացված գործողությունների և ձեռք բերված արդյունքների վերաբերյալ, նաև հետագա համագործակցության հնարավորությունների շուրջ՝ Դանիայի վիճակագրական ծառայության տնօրեն պարոն Լ.Թիգենսենի հետ, հետագա համագործակցության հնարավորությունների շուրջ՝ Շվեդիայի ազգային վիճակագրական ծառայության միջազգային խորհրդատվական գրասենյակի տնօրեն տիկին Պ. Տրագարդի, ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի վիճակագրության բաժնի տնօրեն տիկին Լ.Բրատանովայի և նույն կազմակերպության ներկայացուցիչ պարոն Գ.Գամեզի, Եվրոստատի ներկայացուցիչներ պարոն Պ. Եվերայերսի և տիկին Կ.Յունկերի, Եվրոպական ազատ առևտրի ասոցիացիայի ներկայացուցիչ տիկին Ա. Շելլերի, ԱՄՆ Հաշվառումների Բյուրոյի փորձագետների հետ, Հայաստանում գյուղատնտեսական համատարած հաշվառմանն օժանդակություն ցուցաբերելու վերաբերյալ՝ ԱՄՆ Գյուղատնտեսության դեպարտամենտի փորձագետ պարոն Մ.Ստայների, ՄԱԿ-ի զարգացման ծրագրի, ՄԱԿ-ի Պարենի և Գյուղատնտեսության կազմակերպության, Ավստրիական Զարգացման Գործակալության ներկայացուցիչների հետ Հայաստանում գյուղատնտեսական համատարած հաշվառմանը խորհրդատվական օժանդակություն ցուցաբերելու, ինչպես նաև 2013 թվականի մայիսի 23-24-ը Մոսկվայում կայացած «Ռուսաստանի վիճակագրության մոդերնիզացիայի 20 տարին. փորձը և հեռանկարները» խորագրով միջազգային գիտագործնական կոնֆերանսին մասնակցելու և զեկույցով հանդես գալու վերաբերյալ՝ Ռուսաստանի պետական վիճակագրության դաշնային ծառայության ղեկավար պարոն Ա. Սուրինովի հետ, ուսումնական դասընթացների կազմակերպման հնարավորությունների վերաբերյալ՝ ՄԱԿ-ի Ասիայի և խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի վիճակագրական ինստիտուտի տնօրեն տիկին Մ.Գույերերոյի հետ, Հայաստանում



գյուղատնտեսական համատարած հաշվառմանը օժանդակություն ցուցաբերելու վերաբերյալ՝ «Պրոգնոզ» ընկերության ներկայացուցիչների հետ, հետագա համագործակցության հնարավորությունների շուրջ՝ Սերբիայի վիճակագրական գրասենյակի տնօրենի օգնական պարոն Ս. Կապուրանի հետ, շրջակա միջավայրի և տնտեսական հաշիվների ներդրման գծով՝ Նորվեգիայի վիճակագրական ծառայության փորձագետ տիկին Զ.Հասսի հետ, հետագա համագործակցության հնարավորությունների շուրջ, մասնավորապես, բնակչության ռեգիստրի, գյուղացիական տնտեսությունների ռեգիստրի, Հայաստանի ազգային վիճակագրական ծառայության վերակազմակերպման գծով՝ Նորվեգիայի վիճակագրական ծառայության ներկայացուցիչ պարոն Վյոբորնի հետ:

2014 թվականին ԵՄ Թվինինգ գործիքի ներքո «Աջակցություն Հայաստանի ազգային վիճակագրական ծառայությանը Թվինինգի միջոցով» խորագրով ծրագրի շրջանակում իրականացված գործողությունների և ձեռք բերված արդյունքների վերաբերյալ՝ Դանիայի վիճակագրական ծառայության գլխավոր տնօրեն պարոն Յ. Էլմեսկովի հետ, հետագա համագործակցության հնարավորությունների շուրջ՝ Եվրոստատի ներկայացուցիչ պարոն Պ. Եվերայերսի հետ, Ավստրիայի ազգային վիճակագրական ծառայության միջազգային համագործակցության բաժնի պետ տիկին Բ. Դրանդիցի և ԱՄՆ-ի Գյուղատնտեսության դեպարտամենտի փորձագետ պարոն Մ.Ստայների հետ, մասնավորապես, ԳՀՀ բնագավառում, Ռուսաստանի պետական վիճակագրության դաշնային ծառայության ղեկավար պարոն Ա.Սուրինովի հետ՝ ԳՀՀ բնագավառում երկկողմանի ծրագիր իրականացնելու վերաբերյալ, ներգրավելով «Պրոգնոզ» ընկերությունը, ՄԱԿ-ի Ասիայի և խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի վիճակագրական ինստիտուտի տնօրեն տիկին Մ.Գույերերոյի հետ՝ ուսումնական դասընթացների կազմակերպման հնարավորությունների վերաբերյալ, մասնավորապես, 2015 թվականին Երևան քաղաքում, ինչպես նաև Մակեդոնիայի վիճակագրական ծառայության տնօրեն տիկին Բ.Նովկովսկայի հետ՝ հետագա համագործակցության հնարավորությունների վերաբերյալ «Փարիզ 21»-ի շրջանակում, Իրանի Իսլամական Հանրապետության վիճակագրական կենտրոնի տնօրեն պարոն Ա. Ազարի և տնօրենների խորհրդի անդամների հետ՝ հետագա համագործակցության հնարավորությունների, հեռանկարների և ուղղությունների, վիճակագրական տարբեր ոլորտներին ուղղված ապագա քայլերի և գործողությունների վերաբերյալ, Եվրոստատի ներկայացուցիչ տիկին Կ. Յունկերի հետ՝ նոր Թվինինգ Ծրագրի առաջարկի վերաբերյալ, ինչպես նաև Դանիայի և Ավստրիայի վիճակագրական ծառայությունների ներկայացուցիչների հետ՝ հետագա համագործակցության հնարավորությունների շուրջ, Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի (UNECE) ներկայացուցիչ պարոն Գ.Գամեսի և Իտալիայի ազգային վիճակագրական ինստիտուտի ներկայացուցիչ տիկին Ն.Միգնոլլիի հետ՝ հետագա համագործակցության հնարավորությունների շուրջ, Եվրոպական ազատ առևտրի ասոցիացիայի (EFTA) ներկայացուցիչ տիկին Ա. Շելլերի հետ՝ հետագա համագործակցության հնարավորությունների շուրջ, մասնավորապես, «Ընդհանուր Վիճակագրական Բիզնես-գործընթացի Մոդելի (GSBPM)» ներդրման ուղղությամբ, Ղազախստանում ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի գործադիր ներկայացուցիչ պարոն Ռ.Սիսեմայիևի հետ հետագա համագործակցության հնարավորությունների շուրջ, ՄԱԿ-ի Ասիայի և խաղաղօվկիանոսյան

տարածաշրջանի տնտեսական և սոցիալական հանձնաժողովի (UNESCAP) ներկայացուցիչ տիկին Ռ.Հանսենի հետ՝ հետագա համագործակցության հնարավորությունների շուրջ, Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի (UNECE) ներկայացուցիչ պարոն Գ. Գամեսի, Եվրոպական ազատ առևտրի ասոցիացիայի (EFTA) ներկայացուցիչ պարոն Կ.Վասսի և Եվրամիության վիճակագրական ծառայության (Եվրոստատ) ներկայացուցիչ տիկին Կ. Յունկերի հետ՝ հետագա համագործակցության հնարավորությունների շուրջ, մասնավորապես, ՄԱԿ-ի զարգացման հաշվի (UNDA) 9-րդ տրանշի «Ազգային կարողությունների հզորացում UNECE-ի առավել խոցելի երկրներում վիճակագրության կայուն զարգացման համար» նախագծի շրջանակում:

2015 թվականի Եվրոստատի ներկայացուցիչներ պարոն Պ. Եվերայերսի և տիկին Կ. Յունկերի հետ, ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի (UNECE) ներկայացուցիչ տիկին Լ.Բրատանովայի հետ, Եվրոպական ազատ առևտրի ասոցիացիայի (EFTA) ներկայացուցիչ տիկին Ա.Շելլերի հետ, ՄԱԿ-ի Պարենի և Գյուլատնտեսության կազմակերպության ներկայացուցիչ պարոն Պ. Գենարիի հետ, Ավստրիայի ազգային վիճակագրական ծառայության ղեկավար պարոն Կ.Պեսենդորֆերի և միջազգային համագործակցության բաժնի պետ տիկին Բ.Դրանդիցի և ԱՄՆ Գյուլատնտեսության դեպարտամենտի փորձագետ պարոն Մ. Ստայների հետ, մասնավորապես ԳՀՀ բնագավառում, Նորվեգիայի ազգային վիճակագրական ծառայության միջազգային համագործակցության բաժնի ներկայացուցիչներ պարոն Վ. Աալանդսլուդի և տիկին Լ. Ռոգներուդի հետ հետագա համագործակցության հնարավորությունների շուրջ և մասնավորապես որակի կառավարման և Ընդհանուր Վիճակագրական Բիզնես-գործընթացի Մոդելի ներդրման վերաբերյալ, ՄԱԿ-ի Ասիայի և խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի վիճակագրական ինստիտուտի տնօրեն տիկին Մ. Գույերերրոյի հետ, մասնավորապես հաղորդակցման և հրապարակայնության ոլորտում ուսումնական դասընթացների կազմակերպման հնարավորությունների վերաբերյալ:

Միջազգային վիճակագրական համագործակցության շրջանակում 2014 թվականի հոկտեմբերի 11-31-ը ներառյալ Հայաստանի Հանրապետությունում ԳՀՀ (փորձնականը՝ 2013 թվական) անցկացմանն օժանդակելու նպատակով Ծառայության կողմից իրականացվել են Հայաստանի Հանրապետության հնարավոր դոնորների ներգրավման, ծրագրային առաջարկների, համապատասխան գրությունների, նամակների, նյութերի մշակման և թարգմանչական աշխատանքներ:

Ծառայության միջազգային համագործակցությունը տարբեր երկրների ազգային վիճակագրական ծառայությունների և միջազգային կազմակերպությունների հետ իրականացվել է նաև վիճակագրական տեղեկատվության ընդլայնված փոխանակությամբ և թղթակցության վարմամբ թվով 3 863 (այդ թվում՝ 2013 թվականին՝ 1 143, 2014 թվականին՝ 1 110 և 2015 թվականին՝ 1 610), էլեկտրոնային փոստով պատասխանվել է 546 հարցումների (այդ թվում՝ 2013 թվականին՝ 192, 2014 թվականին՝ 170 և 2015 թվականին՝ 184): Ստացվել են բազմաթիվ տարեգրքեր, տեղեկագրեր, տեղեկատուներ, մեթոդաբանական ձեռնարկներ, հարցաթերթեր և այլ վիճակագրական նյութեր:

2013-2015 թվականների ընթացքում միջազգային համագործակցության շրջանակում Ծառայության կողմից լույս է ընծայվել 8 (այդ թվում՝ 2013 թվականին՝ 2, 2014 թվականին՝ 2 և 2015 թվականին՝ 4) մամուլի հաղորդագրություն:

Հաշվետու ժամանակահատվածում միջազգային համագործակցության շրջանակում տեղի են ունեցել 391 պաշտոնական հանդիպումներ (այդ թվում՝ 2013 թվականին՝ 139, 2014 թվականին՝ 91 և 2015 թվականին՝ 161), որոնց վերաբերյալ կազմվել են արձանագրություններ:

2013-2015 թվականների ընթացքում Ծառայության կողմից լրացվել և նախատեսված պարբերականությամբ ԱՊՀ Միջպետական վիճակագրական կոմիտեին տրամադրվել են 514 վիճակագրական հարցաթերթեր (այդ թվում՝ 2013 թվականին՝ 194, 2014 թվականին՝ 156 և 2015 թվականին՝ 164), որոնցից՝ 65-ը (այդ թվում՝ 2013 թվականին՝ 32, 2014 թվականին՝ 14 և 2015 թվականին՝ 19)՝ ամսական, 92-ը (այդ թվում՝ 2013 թվականին՝ 35, 2014 թվականին՝ 27 և 2015 թվականին՝ 30)՝ եռամսյակային և 357-ը (այդ թվում՝ 2013 թվականին՝ 127, 2014 թվականին՝ 115 և 2015 թվականին՝ 115)՝ տարեկան պարբերականությամբ:

2015 թվականին Եվրասիական տնտեսական հանձնաժողովի վիճակագրության դեպարտամենտին նախատեսված պարբերականությամբ տրամադրվել է 121 վիճակագրական հարցաթերթեր, որոնցից 26-ը՝ ամսական, 11-ը՝ եռամսյակային և 84-ը՝ տարեկան պարբերականությամբ: